ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2012 թվականի թիվ 47-Ա

2012Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ 'ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ' ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ' ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ' ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2012թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 'Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը' ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին ' Երեխաների իրավունքների պաշտպանության օր' միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2012թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 'Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը' ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 390.0 հազ. դրամ գումարն ուղղել ' Երեխաների իրավունքների պաշտպանության օր ' միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանին. ' Երեխաների իրավունքների պաշտպանության օր ' միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

մայիսի 2012թ.
ք. Իջևան